



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

26 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2018թ.

ՈՐՈՇՈՒՄ N 60

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ 6
ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ
հոդվածի 1-ին կետով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՛

Հաստատել 26.10.2018 թվականի թիվ 6 արտահերթ նիստի օրակարգը.

1. Հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու մասին:
2. Վայք համայնքի սեփականություն հանդիսացող Արագի փող. 1-ին փակուղի 1 հասցեում գտնվող 10-003-0042-0006 ծածկագրով 500,0 քմ մակերեսով բնակավայրի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողատարածքը աճուրդով օտարելու վերաբերյալ:
3. Հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու մասին
4. Վայք համայնքի ղեկավարի հաղորդումը 2018 թվականի երրորդ եռամսյակում բյուջեի կատարման ընթացքի մասին
5. Վայք համայնքի ավագանու 30/01/2018թ. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՅԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 6 որոշմամբ (ՆԻՍՏ N 1) հաստատված թիվ 1 հավելվածը ուճը կորցրած ճանաչելու, նոր փոփոխված հավելված հաստատելու, թիվ 3 և թիվ 4 հավելվածներում փոփոխություններ կատարելու մասին
6. «Վայքի քաղաքային գրադարան» համայնքային որ առևտրային կազմակերպությունը միացման ձևով վերակազմակերպելու՝ միացնելով «Վայքի քաղաքային համայնքի մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը, ՀՈԱԿ-ի նոր խմբագրությամբ կանոնադրությունը հաստատելու, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը,

պաշտոնային դրույքաչափերը հաստատելու, համայնքի ղեկավարի 22.10.2018թ. թիվ 143 որոշումը հաստատելու, ՀՈԱԿ-ների միացման պայմանագրերը, փոխանցման ակտը հաստատելու մասին:

7. Համայնքի բյուջեի նախահաշվում փոփոխություններ կատարելու մասին:

Կողմ -7

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՐԱՐԱՑԱՆ ԱՐԱՐԱՏ

ԳԵՂԱՄՅԱՆ ՀԱՆԼԵՏ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԹԱՂԵՎՈՍՅԱՆ ՎԱՀԱՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ


ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆ ՇՐԱԶԻԿ

ՎԱՐՊԱՆՅԱՆ ԱԵՎՈՆ

ՀԱՍՏԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ  Թ. ԱՎԵՏՅԱՆ

Պրոշման նախագիտող մայրապապորուպետց'
Գ. ԱՄԻՔԿԱՐԱՐՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

26 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2018թ.

ՈՐՈՇՈՒՄ N 61

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վայք համայնքի Ազատել գյուղի Վայքի փող. 1 հասցեում գտնվող գյուղատնտեսական նշանակության արոտավայրը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի պահեստարանների գործառնական նշանակության փոխելու համար հիմք է հանդիսանում հանգուցյալ Կառլեն Սիմոնյանի իրավահաջորդների լիազորված անձ Սուսաննա Հովհաննեսի Ալիխանյանի դիմումը, դիմումին կից ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տրված 07/09/2016թ. N ԱՏ-05/09/2016-45-0009 տեղեկանքը, ՀՀ կառավարության առընթեր <<Հայքնակկոմտնտ>> ՀՄ տեխնիկական գույքագրման վարչության կողմից տրված սեփականության վկայագիրը:

Նպատակային նշանակությունը փոխելու հիմնական նպատակը՝ արտադրական գործունեություն ծավալելն է և ժառանգություն ընդունելը:

Վերը նշված հողամասը նպատակային օգտագործելու համար անհրաժեշտ է նշված գյուղատնտեսական նշանակության հողամասը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիայի:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի, հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի պահանջներով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հիմք ընդունելով քաղ. Սուսաննա Հովհաննեսի Ալիխանյանի դիմումը՝ պահեստային շինությունները զբաղեցրած և սպասարկման համար առանձնացված հողամասով նպատակային օգտագործելու և ժառանգությունը ընդունելու վերաբերյալ Վայք համայնքի վարչական սահմաններում գտնվող Ազատել գյուղում գտնվող Կառլեն Սիմոնյանին սեփականության իրավունքով պատկանած 0,26956հա գյուղատնտեսական նշանակության արոտավայրը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ

արտադրական նշանակության հողերի կատեգորիայի պահեստարանների գործառնական նշանակության

2. Խնդրել ՀՀ Վայոց Ձորի մարզպետին սույն որոշումը ներկայացնելու ՀՀ Կառավարության քննարկմանը:

Կողմ -7

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ԳԵՂԱՄՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՎԱՀԱՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆ ՀՐԱԶԻԿ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼԵՎՈՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ  Թ. ԱՎԵՏՅԱՆ

Որոշման նախագիծը նախապատրաստեց՝
Գ. ՄՈՒՇԿԱՄԲԱՐՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌՈՒԹԵՐ
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՏԵՂԵԿԱԼՔ

ԳՈՒՅՔԻ ԱՌԱՆՁԻՆ ՈՐԱԿԱԿԱՆ ԶԱՆԱԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԻ ԵՎ ԴՐԱ ՆԿԱՏԱՍԱՐ
ԱՌԱՆՁԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ (ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ) ԿԵՐԱԲԵՐՅԱԼ

07/09/2016թ. N ԱՏ-05/09/2016-45-0009

Դիմող՝

ՍՈՒՄԱՆԱ ԱԼԻԽԱՆՅԱՆ ՀՈԿՀԱՆՆԵՍԻ

N 05/09/2016-45-0009 դիմումի հիման վրա

Առ այն, որ մարզ Վայոց Ձոր, համայնք Ազատեկ Վայցի փողոց 1 հասցեում գտնվող անշարժ գույքը 2811 քմ հողամասով և 86.5 քմ օժանդակ կառուցներով գույքագրվել է Վաղյն Աթաբեկյանի Սիմոնյանի անվամբ: Կերտիչյալ հասցեում գտնվող շինությունների և հողամասի մակերեսները քստ լիցենզավորված անձի կողմից ներկայացված հատակագծի համապատասխանաբար կազմում է պահեստ՝ 68.58 քմ, պահեստ՝ 19.98 քմ, հողամաս՝ 0.26956 հա: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ համաձայն մուտքագրման քաժմի կողմից կազմած եզրակացության էլեկտրոնային քարտեզի եւ ՀՀ կառավարության 28.09.2005թ. 1714-Ն որոշման նշված հողատարածքը հանդիսանում է որպես համայնքային սեփականություն հանդիսացող արտավայր: Կադաստրային քարտեզում հողամասի նշանակության ուղղում կատարելու համար անհրաժեշտ է ներկայացնել միջգերատեսչական հանձնաժողովի կողմից տրամադրված համապատասխան որոշում:

**Տեղեկանքը կազմվել է ՀՀ ԿԱ Անշարժ գույքի պետական կոմիտեի
աշխատակազմի Վայոց Ձորի մարզային ստորաբաժանման արխիվի
քաժմի պետ
Հոմերոս Ռուստամյանի կողմից**

«Սույն տեղեկանքը հաստատված է Էլեկտրոնային եղանակով՝ տեղեկանքը կազմող պաշտոնատար անձի կողմից:

Տեղեկանքը հանձնող ՀՀ ԿԱ Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի
սպասարկման գրասենյակ Կ.Տ.





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԱՆ
Վ Ա Յ Ո Ց Ձ Ո Ր Ի
Մ Ա Ր Ձ Պ Ե Տ**

ք. Եղեգնաձոր, Շահումյան 5

Հեռ. /374010/ 287401, /3740281/ 2 25 22

<<_____>> _____ 2018թ. N _____

Ֆաքս /374010/ 28 18 32

**«Վ Ա Յ Ո Ց Ձ Ո Ր Ի Մ Ա Ր Ձ Ի Վ Ա Յ Ք Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի
Ղ Ե Կ Ա Վ Ա Ր Պ Ա Ր Ո Ն Թ. Ա Վ Ե Տ Յ Ա Ն Ի Ն»**

Հարգելի գործընկեր

Ի պատասխան Վայոց ձորի մարզպետին ուղղված Ձեր 2018թ. հուլիսի 23-ի թիվ. 221 գրության՝ առաջարկվում է Ձեզ ղեկավարվել «Կառավարության 29 դեկտեմբերի 2011 թվականի N 1918-Ն որոշման պահանջներով՝ և Վայք համայնքի Ազատեկ բնակավայրի Վայքի փողոց 1 հասցեում գտնվող Կառվեն Սիմոնյանի հողամասի փոփոխման հողաշինարարական փաստաթղթերը ներկայացնել «Վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի թիվ. 559 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովին:

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 8/8/2018 15:46:59 GMT+4

Հարգանքով՝

Signed by: SAGHATELYAN ARAGATS 2204630128

Ա. ՍԱԴԱԹԵԼՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՆՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՒԳԻՐ

Կարգավիճակը հարգելի է արձանագրվել
Հասցե Երևան Գրառչության պալատ

Մասնագետ Ռ. Բաղդասարյան կարգի է հանվում

ՎՅՄԱՍ ԿԱՅԵՐԷՐ

Կրթական և մասնագիտական իրավունքի պալատի անդամ

Ռ. Բաղդասարյան անունով հարգելի է արձանագրվել 1996թ.

1/4 քառորդում հիման վրա

Կրթական գրք 7-1



ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՀԱՅՐԱՎԱԿՈՄԻՏԵՍ. ՀՄ
ՏԵԼ. ԽՎԱՍԱՆ, ԳՐԻՑ ԲԱԳՐՈՒՄ, ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

Ռ. Բաղդասարյան
ԲՅՈՒՐՈՑԻ
ՏԵՎԱՍՏԱՐ

ՊԵՏ. Ռ. Բաղդասարյան Վ. Բաղդասարյան

	8 1 2 3				Արևիկ
	Պատվար	Գույն	Կապույտ	Պարիսի	
Կ. Բ.	Պատվար	Մեծահասակ	Բնակիչ սենյակ	Բնակարան	

ՇՐՈՒՑՆԵՐԱԲԻ ՀԱՏՈՒՄՈՒ Ը 1 2 3




ԱՐԽԻՎ

Մ. Բ.

0.12	0.081	-	-	7.76	1.031	0.1188	
Արևիկա	Լիճ	Կո	Կոնդուկտ	Լիճ	Կոնդուկտ	Կոնդուկտ	Կոնդուկտ
Մոդիլի							
Հմբարհուց վարչարան							

ՀԱՂԱՍՈՒՄ ԿԱՏԱՐԱԳՐԻ Մ 1:500

Յ Ս Զ



ՍՏԱՆԲԱՆԱԿԱՆ

ՀԱՂԱՍՈՒՄ


ՂԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ



ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ



ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼԵՎՈՆ



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Թ. ԱՎԵՏՅԱՆ

Որոշման նախագիծը նախապայտրաստեց՝
Գ. ՄՈՒՇԿԱՄԲԱՐՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

26 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2018թ.

ՈՐՈՇՈՒՄ N 63

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վայք համայնքի Ազատել գյուղում գտնվող գյուղատնտեսական նշանակության արոտավայրը բնակավայրերի նշանակության հողերի բնակելի կառուցապատման գործառնական նշանակության փոխելու համար հիմք է հանդիսանում քաղ. Թաթուլ Վարդանի Ալեքսանյանի դիմումը, դիմումին կից ՀՀ պատգամավորների Վայքի ավանային խորհրդի գործադիր կոմիտեի 1995թ. հունվարի 29-ի թիվ 1 որոշումը՝ տնամերձ հողամաս հատկացնելու մասին:

Նպատակային նշանակությունը փոխելու հիմնական նպատակը՝ բնակելի տուն կառուցելու նպատակով:

Վերը նշված հողամասը նպատակային օգտագործելու համար անհրաժեշտ է նշված գյուղատնտեսական նշանակության հողամասը փոխադրել բնակավայրերի կատեգորիայի:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի, հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի պահանջներով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հիմք ընդունելով քաղ. Թաթուլ Վարդանի Ալեքսանյանի դիմումը՝ իրեն հատկացված տնամերձ հողամասը ըստ հատկացման նպատակային օգտագործելու վերաբերյալ Վայք համայնքի վարչական սահմաններում գտնվող Ազատել գյուղում գտնվող 0,07 հա գյուղատնտեսական նշանակության արոտավայրը փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիայի բնակելի կառուցապատման գործառնական նշանակության
2. Խնդրել ՀՀ Վայոց Ձորի մարզպետին սույն որոշումը ներկայացնելու ՀՀ Կառավարության քննարկմանը

Կողմ -7

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ԳԵՂԱՄՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԿԱՀԱՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆ ՀՐԱԶԻԿ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼԵՎՈՆ

S. Ghassabian

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Թ. ԱՎԵՏՅԱՆ



Որոշման նախագիծը նախապայտրաստեց՝
Գ. ՄՈՒՇԿԱՄԲԱՐՅԱՆ

Ք Ա Ղ Վ Ա Տ Ք

ՀՀ պատգամավորների Վայքի ավանային խորհրդի գործադիր կոմիտեի
1995 թվականի հունվարի 29-ի նիստի թիվ 1 արձանագրությունից

Վայք ավանի բնակիչ Քաթուլ Վարդանի Ալեքսանյանի դիմումը
սեփական բնակելի տուն կառուցելու համար հողատարածություն
հատկացնելու մասին

Ավանային խորհրդի գործադիր կոմիտեն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ է՝

1. Հարգել ավանի բնակիչ Քաթուլ Վարդանի Ալեքսանյանի դիմումը
և սեփական բնակելի տուն կառուցելու նրան ավանի/նախկին ԱՇԿԿ-ի
կոոպերատիվի տարածքից հատկացնել 0,07 հա տնամերձ հողամաս:
2. Հանձնարարել քաղ. Քաթուլ Ալեքսանյանին բնակելի տան շինարարու-
թյունը կատարել շրջ. գլխավոր մարտարագետի կողմից տրված նախագծա-նախա-
հաշվային պատմությունների համաձայն:



ՎԱՅՔԻ ԱՎԱՆԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵ

ՍԵՄԻՎԱՀ՝ Վ. ԱՆՍՏՐՅԱՆ

ՔԱՏՈՒԼ Վ. ԱՆՍՏՐՅԱՆ /

Handwritten signature of V. Anstryan



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

26 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2018թ.

ՈՐՈՇՈՒՄ N 64

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՅՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՅՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետին, 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետին, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՛

1. Ընդունել ի գիտություն Վայք համայնքի ղեկավարի հաղորդումը 2018 թվականի երրորդ եռամսյակում բյուջեի կատարման ընթացքի մասին՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -7

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ԳԵՂԱՄՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՎԱՀԱՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՄԱՆՈՒՋԱՐՅԱՆ ՀՐԱԶԻԿ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼԵՎՈՆ

S. Gevorgyan

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ  **Վ. ԱՎԵՏՅԱՆ**

Որոշման նախագիծը նախապատրաստվեց՝
 Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



Հավելված համայնքի ավագանու

26/10/2018թ. Թիվ N 64 որոշման

30.09.2018թ. դրությամբ


Եկամտատեսակ	Նախատեսված /3- եռամսյակ/	Կատարողական /3-եռամսյակ/	Կատարման տոկոս
Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար	3000.0	2952.4	98.4
Գույքահարկ	18000.0	17566.3	97.6
Տեղական տուրքեր	4100.0	4051.9	98.8
Ընդհամենը գույքի և հողի վարձակալությունից եկամուտներ	12500.0	11303.3	90.4
Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	95815.4	95815.4	100
Այլ եկամուտներ/Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, Վարչական գանձումներ, օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտներ/	40000.0	33961.7	84.9
ԸՆԴԱՄԵՆԸ	173415.4	165651.0	95.5

Ծախսային մաս	Նախատեսված /3-եռամսյակ	Կատարողական /3-եռամսյակ/	Կատարման տոկոս
Դրամով վճարվող աշխատավարձեր և հավելավճարներ	45500.0	45303.5	99.6
Էներգետիկ ծառայություններ	2500.0	2326.9	93.1
Կապի ծառայություններ	400.0	315.6	78.8
Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ	1520.0	1255.0	82.6
Պայմանագրային ծառայությունների ձեռք բերում	3000.0	2715.0	90.5
Դրամաշնորհներ	101216.6	101216.6	100
ԸՆԴԱՄԵՆԸ	154136.6	153132.6	99.3
Ոչ նյութական հիմնական միջ.գրքեր	300.0	200.0	66.7
Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում, շինարարություն	5000.0	1150.0	23.0
Մեքենաներ և սարքավորումներ, այլ հիմնական միջոցներ ,վարչ.սարք.	1000.0	460.0	46.0
Նախագծի ծա	6000.0	150.0	2.5

Վայք համայնքի ղեկավար Թ.Մ.Ավետյան

Ֆինանսական բաժնի ղեկավար Ն.Զ.Հովհաննիսյան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

26 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2018թ.

ՈՐՈՇՈՒՄ N 65

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 30/01/2018թ. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 6 ՈՐՈՇՄԱՄԲ/ՆԻՍՏ N 1/ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԹԻՎ 1 ՀԱՎԵԼՎԱԾԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ, ՆՈՐ ՓՈՓՈԽՎԱԾ ՀԱՎԵԼՎԱԾ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ԹԻՎ 3 ԵՎ ԹԻՎ 4 ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-րդ մասի 1-ին, 3-րդ կետի 34-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներով,

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՛

1. Ուժը կորցրած ճանաչել Վայք համայնքի ավագանու 30/01/2018թ. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 6 որոշմամբ(ՆԻՍՏ N 1) հաստատված թիվ 1 հավելվածը և հաստատել համայնքապետարանի նոր կառուցվածը՝ ըստ կից հավելվածի:
2. Վայք համայնքի ավագանու 30/01/2018թ. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 6 որոշմամբ(ՆԻՍՏ N 1) հաստատված թիվ 3 և թիվ 4 հավելվածներում նշված «տեխնիկական աշխատող» բառերը փոխարինել «հավաքարար» բառերով:

Կողմ -7

Դեմ -0

Ձեռնպահ -0

ՍՐԱՐԱՏՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ԳԵՂԱՄՅԱՆ ՀԱՍԼԵՏ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՏԻԳՐԱՆ *S. Gevorgyan*
ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՎԱՀԱՆ *Vahanyan*
ՂԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ *Karapetsyan*
ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆ ՀՐԱԶԻԿ *Hrazhikyan*
ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼԵՎՈՆ *Levonyan*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ *Armenian* Թ. ԱՎԵՏՅԱՆ

Որոշման նախագիծը նախապայտրամարտից՝
Գ. ՄՈՒՇԿԱՄԲԱՐՅԱՆ



**ՎԱՅՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
 ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ

1. Ներքին առդիտի բաժին
2. Ֆինանսական բաժին

ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ

1. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Վայքի տարածքային բաժին

ՎԱՅՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՑԻՆ ԴՐՈՒՅՔԱԶՍՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը- 38

Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝


ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՑԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՑԻՆ ԴՐՈՒՅՔԱԶՍՓԸ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ		
Համայնքի ղեկավար	1	400000
Համայնքի ղեկավարի տեղակալ	1	265000
Քաղաքապետի օգնական	1	230000
Խորհրդական	1	78000
ԸՆԴԱՄԵՆԸ	4	
ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ		
Բնակավայրի վարչական ղեկավար	4	170000
ԸՆԴԱՄԵՆԸ	4	
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ		
Աշխատակազմի քարտուղար	1	270000
Գլխավոր մասնագետ	3	170000
Առաջատար մասնագետ	1	145000
2-րդ կարգի մասնագետ	4	130000
ԸՆԴԱՄԵՆԸ	9	
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲԱԺԻՆ		
Բաժնի պետ	1	265000
Գլխավոր մասնագետ-հաշվապահ	1	170000
Առաջատար մասնագետ	3	145000
ԸՆԴԱՄԵՆԸ	5	
ՔԿԱԳ ՎԱՅՔԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԻՆ		
Բաժնի պետ	1	265000
Առաջին կարգի մասնագետ	1	145000
ԸՆԴԱՄԵՆԸ	2	
ՆԵՐՔԻՆ ԱՌԻԴԻՏԻ ԲԱԺԻՆ		
Բաժնի պետ	1	265000
ԸՆԴԱՄԵՆԸ	1	
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՏԵՆ. ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ		
Վարորդ	1	150000
Գործավար	1	90000
Տեղեկատվական համակարգի օպերատոր	1	100000

Գյուղական բնակավայրերի աշխատանքների համակարգող	1	73000
Հավաքարար	1	75000
Պահակ	2	75000
Անասնաբուժ/պայմանագրային/	2	78000
Տեխ. աշխատող/պայմանագրային/	2	78000
ԸՆԴԱՄԵՆԸ	11	

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՆ



Գ. ՍՈՒՇՎԱՍԲԱՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

26 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2018թ.

ՈՐՈՇՈՒՄ N 66

<<ՎԱՅՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
 ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՄԻԱՑՄԱՆ ԶԵՎՈՎ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ՝ ՄԻԱՅՆԵԼՈՎ
 <<ՎԱՅՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ
 ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ, ՀՈԱԿ-Ի ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ
 ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,
 ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿԸ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀԱՄԱՅՆՔԻ
 ՂԵԿԱՎԱՐԻ 22.10.2018թ. ԹԻՎ 143 ՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀՈԱԿ-ՆԵՐԻ ՄԻԱՑՄԱՆ
 ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ, ՓՈԽԱՆՑՄԱՆ ԱԿՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին և 64-րդ հոդվածի 2-րդ մասերով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ պարբերությամբ, 24-րդ հոդվածի 1-ին մասով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. <<Վայքի քաղաքային գրադարան>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը միացման ձևով վերակազմակերպել՝ միացնելով <<Վայքի քաղաքային համայնքի մշակույթի տուն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը:
2. Հաստատել <<Վայքի քաղաքային համայնքի մշակույթի տուն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության նոր խմբագրությամբ կանոնադրությունը՝ համաձայն թիվ 1 հավելվածի:
3. Հաստատել <<Վայքի քաղաքային համայնքի մշակույթի տուն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը, համաձայն հավելված 2-ի:
4. Հաստատել Համայնքի ղեկավարի 22.10.2018թ. թիվ 143 որոշումը:
5. Հաստատել <<Վայքի քաղաքային գրադարան>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության և <<Վայքի քաղաքային համայնքի մշակույթի տուն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության միջև կնքված միացման պայմանագիրը
6. Հաստատել <<Վայքի քաղաքային գրադարան>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության գույքի, այլ գույքային իրավունքների, ինչպես նաև պարտատերերին և

պարտապաններին վերաբերող բոլոր/ներառյալ վիճարկվող/ պարտավորությունների <<Վայքի քաղաքային համայնքի մշակույթի տուն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը փոխանցման ակտը՝ համաձայն հավելված 3-ի:

7. համայնքի ղեկավարին՝ իրականացնել սույն որոշումից բխող գործառույթներն՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:
8. Սույն որոշման 1-ին և 3-րդ կետերն ուժի մեջ են մտնում նշված վերակազմակերպումը սահմանված կարգով իրավաբանական անձանց պետական ռեգիստրի միասնական գրանցամատյանում գրանցման պահից:
9. Սույն որոշման 3-րդ կետի ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Վայք համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 30-ի «ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայքի համայնքապետարանի աշխատակազմի և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների 2018 թվականի թվաքանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 6 որոշման 1-ին կետի N 4 և N 8 հավելվածները

Կողմ -7

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ԳԵՂԱՄՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՎԱՀԱՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆ ՀՐԱԶԻԿ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼԵՎՈՆ


ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

 Թ. ԱՎԵՏՅԱՆ

Որոշման նախագիծը նախապարհաստեղ՝
Գ. ՄՈՒՇԿԱՄԲԱՐՅԱՆ



Հաստատված է
Վայր համայնքի ավագանու
2018թ. ~~հունվարի 26-ի~~ N-66 որոշմամբ

Վայր համայնքի
ղեկավար  Թ.Ավետյան



ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ

« _____ » _____ 20 թ.

գրանցման թիվ _____

ՀՎՀՀ _____

աշխատակից _____

« _____ » _____ 20 թ.

«ՎԱՅՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ»
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

/նոր խմբագրությամբ/

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. Վայոց Ձոր մարզի Վայք համայնքի «Վայքի քաղաքային համայնքի Մշակույթի տուն» ոչ առևտրային կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի «Վայքի քաղաքային գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության/գրանցված է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 29. 02.2012 թ., գրանցման թիվ՝ 44.215.72941, հարկ վճարողի հաշվառման համար՝ 09101274, գտնվելու վայրի հասցեն՝ 3801, Հայաստան, ք. Վայք, Լենինի փող. 1/ միացման ճանապարհով վերակազմավորման արդյունքում և հանդիսանում է նրա իրավահաջորդը:
- 1.2. Կազմակերպության հիմնադիրը Վայք համայնքն է /այսուհետ Յիմնադիր/, որի անունից հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության Վայոց Ձոր մարզի Վայք համայնքի ղեկավարը:
- 1.3. Կազմակերպությունը որպես սեփականություն՝ ունի առանձնացված և իրեն ամրացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Կազմակերպությունը Յիմնադրի համաձայնությամբ, իր անունից ձեռք է բերում և իրականացնում գույքային ու անձնական ոչ գույքային իրավունքներ, կրում պարտականություններ, դատարանում կարող է հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:
- 1.4. Կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության գինանշանի պատկերով և իր հայերեն անվամբ կլոր կնիք, իր անվամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:
- 1.5. Կազմակերպության իրավունակությունը ծագում է նրա ստեղծման /պետական գրանցման/ և դադարում է լուծարման ավարտի /լուծարման պետական գրանցման / պահից:
- 1.6. Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանակային հաշիվ:
- 1.7. Կազմակերպությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն Յիմնադրի որոշմամբ:
- 1.8. Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով /այսուհետ՝ օրենսգրք/, «Գրադարանների և գրադարանային գործի մասին» ՀՀ օրենքով/այսուհետ՝ օրենք/, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով /այսուհետ՝ օրենք/, ՀՀ իրավական այլ ակտերով և սույն կանոնադրությամբ:
- 1.9. Կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում Յիմնադիրի պարտավորությունների համար:
- 1.10. Կազմակերպության անվանումն է՝ հայերեն լրիվ՝ «Վայք համայնքի Մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն կրճատ՝ «Վայք համայնքի Մշակույթի տուն» ՀՈԱԿ
- 1.11. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ ք. Վայք, Լենինի 1:

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՈՒՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

- 2.1. Կազմակերպության ստեղծման նպատակն է Հայաստանի Հանրապետության Վայոց Ձոր մարզի Վայքի քաղաքային համայնքում մշակութային միջոցառումների կազմակերպումը, համայնքի բնակչության գրադարանային-տեղեկատվական մատչելիության ապահովումը, գրադարանային հավաքածուն հանրապետական, մարզային, տեղական տեղեկույթ կրող համապատասխան նյութական կրիչով համալրում, ինչպես նաև էլեկտրոնային շտեմարանի միջոցով դրանց պահպանման իրականացումը:
- 2.2. Իր առջև դրված խնդիրների իրականացման համար կազմակերպությունը

- իր կողմից կնքված պայմանագրերի ու համաձայնագրերի հիման վրա իրականացնում է երկկողմանի ու բազմակողմանի կապեր այլ կազմակերպությունների, իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ,
- կարող է իրականացնել միայն օրենքով կամ Հիմնադրի որոշմամբ ուղղակիորեն նախատեսված գործունեության տեսակներ,
- պատասխանատու է պետական չափորոշիչներին:

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պետական գրանցման պահից կազմակերպությունը ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ :

Կազմակերպությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից կնքել պայմանագրեր, ձեռք բերել, իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, Հայաստանի Հանրապետության բանկերում՝ հաշվարկային բանկային հաշիվներ:

3.2. Հիմնադրի որոշումների կամ սույն կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

3.3. Օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայություններ մատուցել և աշխատանքներ կատարել օտարերկրյա իրավաբանական անձանց և /կամ/ ձեռնարկությունների, կազմակերպությունների, քաղաքացիների համար:

3.4. Կազմակերպությունը իրավունք չունի իրեն ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իրավունքները օտարել, գրավ դնել, հանձնել անհատույց օգտագործման:

3.5. Կազմակերպությունը պարտավոր է.

- օրենսդրությամբ կամ իրավական այլ ակտերով սահմանված կարգով իրականացնել հաշվապահական հաշվառում և ներկայացնել վիճակագրական հաշվետվություն,
- աշխատանքային պայմանագրեր կնքել կազմակերպության աշխատակիցների հետ, որոնք ունեն որակավորման բնութագրի պահանջներին համապատասխան անհրաժեշտ ուսումնական-մասնագիտական որակավորում: Աշխատողների իրավունքները, սոցիալական երաշխիքները ու արտոնությունները սահմանվում են ՀՀ օրենսդրությանը համապատասխան, կազմակերպության կանոնադրությամբ և աշխատանքային պայմանագրով,
- պատասխանատվություն կրել և փոխհատուցել իր կողմից հասցված վնասը՝ կնքած պայմանագրերը չկատարելու կամ հարկ եղածին պես չկատարելու, այլ անձանց սեփականության իրավունքը խախտելու համար,
- օրենսդրությամբ սահմանված կարգով հայտարարել կազմակերպության սննդանկազման մասին այն դեպքում, երբ հնարավոր չէ բավարարել պարտատերերի օրինական գույքային պահանջները,
- հրապարակել իր տարեկան ֆինանսական հաշվետվությունները,
- ապահովել կազմակերպության փաստաթղթերի /կանոնադրության, գույքի նկատմամբ գույքային իրավունքները հաստատող փաստաթղթերի, կազմակերպության ներքին փաստաթղթերի, տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվառման փաստաթղթերի, տնօրենի հրամանների, հրահանգների և կարգադրությունների, ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ փաստաթղթերի/ պահպանումը,
- կրել օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ պարտավորություններ:

4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐԸ

4.1. Կազմակերպության հիմնադիրն ունի կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք, բացառությամբ՝ օրենքով նախատեսված դեպքերի: Կազմակերպության կառավարումն իրականացնում է հիմնադիրը, նրա կողմից նշանակված գործադիր մարմինը՝ կազմակերպության տնօրենը:

4.2. Կազմակերպության հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

- ավագանու համաձայնությամբ՝ կազմակերպության հիմնադրումը,
- կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը,
- կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնող և անրացվող համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը,
- կազմակերպության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը,
- կազմակերպության կառավարման համակարգի սահմանումը ,
- կազմակերպության վերակազմակերպումն ու լուծարումը,
- կազմակերպության լուծարման հանձնաժողովի ստեղծումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը,
- կազմակերպությունը հանդիսանում է սեփականատեր՝ մատուցված ծառայություններից ստացված միջոցների, որոնք կօգտագործվեն հիմնադրի կողմից հաստատված ծախսերի կատարման նախահաշվի համաձայն՝ ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով,
- ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը,
- կազմակերպության գույքի վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

5.1. Կազմակերպության կառավարման մարմիններն են կազմակերպության հիմնադիրը՝ համայնքի ղեկավարը և տնօրենը:

- Համայնքի ղեկավարն իրականացնում է կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:
- Սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է կազմակերպության կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը :
- Կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում կազմակերպության տնօրենի՝ ՀՀ օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրությունները և ցուցումները:
- Լսում է կազմակերպության գործունեության մասին հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը:
- Իրականացնում է կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:
- Հաստատում է կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող գույքը:
- Իրականացնում է կազմակերպության գործունեության վերահսկողությունը:
- Հաստատում է կազմակերպության աուդիտն իրականացնող անձին:
- Ընդունում է աուդիտի իրականացման որոշումը:
- Որոշում է ղեկավար պաշտոնատար անձանց աշխատանքի վարձատրման պայմանները:

5.2. Տնօրենը

- իրականացնում է կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումը: Նա օրենքներով, համայնքի ղեկավարի, ավագանու որոշումներով, սույն կանոնադրությամբ և իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է կազմակերպության գործունեությունը և կրում պատասխանատվություն՝ օրենքների, այլ իրավական ակտերի, համայնքի ղեկավարի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:
- առանց լիազորագրի հանդես է գալիս կազմակերպության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում գործարքներ:
- ՀՀ օրենսդրությամբ, համայնքի ղեկավարի ու ավագանու որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է կազմակերպության գույքը, այդ թվում նաև ֆինանսական միջոցները: Օրենքով սահմանված կարգով աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է կազմակերպության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր:
- բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ:

- օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը:
 - լուծում է բոլոր հարցերը, բացի կազմակերպության Հիմնադրի իրավասությանը վերաբերող հարցերի: Տնօրենն օրենքով, հիմնադրի որոշումներով, աշխատանքային պայմանագրով, սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում ղեկավարում է կազմակերպության գործունեությունը և կրում է պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, Հիմնադրի որոշումների, սույն կանոնադրության, աշխատանքային պայմանագրի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:
 - ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը:
 - կազմում է կազմակերպության հաստիքացուցակը և ծախսերի նախահաշիվը ու ներկայացնում Հիմնադրի հաստատմանը:
 - տնօրենի բացակայության դեպքում՝ համայնքի ղեկավարի գրավոր որոշմամբ՝ տնօրենի լիազորություններն իրականացնում է այլ անձ:
- 5.3. Կազմակերպության ընթացիկ տնտեսական, ֆինանսական և այլ գործունեության ղեկավարումը իրականացնում է տնօրենը, որին նշանակում և ազատում է Հիմնադիրը: Կազմակերպության և կազմակերպության տնօրենի միջև աշխատանքային պայմանագիրը Հիմնադրի անունից ստորագրվում է քաղաքապետի կողմից, ուր սահմանվում են տնօրենի իրավունքները, պարտականությունները, փոխհարաբերությունները Հիմնադրի հետ, նրա աշխատանքի վարձատրման պայմանները, պայմանագրի դադարեցման հիմքերը, այլ դրույթներ, որոնք կողմերը կգտնեն անհրաժեշտ:
- 5.4. Կազմակերպության գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են համայնքի ավագանին, Հիմնադիրը, նրա կողմից լիազորված անձը, օրենքով նախատեսված այլ պետական կառավարման մարմիններ:
- Կազմակերպության տարեկան ֆինանսական հաշվետվության հավաստիությունը վերստուգելու համար Հիմնադիրն իրավունք ունի ամեն տարի ներգրավել կազմակերպության, նրա տնօրենի գույքային շահերով չկապված արհեստավարժ վերստուգիչի աուդիտորի /արտաքին աուդիտ/:

6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

- 6.1. Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում Հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան ամրացվող, ինչպես նաև՝ կազմակերպության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:
- 6.2. Կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, Հիմնադրի որոշումներին և /կամ/ իր կանոնադրությանը համապատասխան տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:
- 6.3. Սեփականության իրավունքով կազմակերպությանը պատկանող գույքը /բացառությամբ անշարժ գույքի / կարող է օտարվել /վաճառվել, նվիրել, դուրս գրվել/ կամ վարձակալությամբ տրվել միայն Հիմնադրի գրավոր համաձայնությամբ:
- 6.4. Կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է կազմակերպությունը:
- 6.5. Հիմնադիրն իրավունք ունի վերցնելու իր կողմից կազմակերպությանն ամրացված գույքը:
- 6.6. Կազմակերպությունն իրավունք չունի առանց Հիմնադրի գրավոր համաձայնության իրեն ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու:
- 6.7. Կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը Հիմնադրի անունից հանձնելու վարձակալության, եթե դա արգելված չէ Հիմնադրի, ավագանու որոշմամբ կամ կազմակերպության կանոնադրությամբ: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը չի կարող սահմանվել մեկ տարվանից ավելի՝ բացառությամբ Հիմնադրի կողմից սահմանված դեպքերի: Ամրացված գույքի օգտագործման արդյունքում կազմակերպության ստացած եկամուտները կազմակերպության սեփականությունն են: Կազմակերպության ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները Հիմնադրի սեփականությունն են: Կազմակերպության լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է համայնքի ավագանին:
- 6.8. Կազմակերպությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է ֆինանսական միջոցները:

6.9. Կազմակերպությունը ֆինանսավորում է հիմնադիրը: Կազմակերպության ֆինանսական միջոցները գոյանում են համայնքի բյուջետային և ՀՀ օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:

6.10. Կազմակերպության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են.

- հիմնադրի կողմից թույլատրված ձեռնարկատիրական գործունեությունից գոյացած միջոցները,
- բարեգործական նպատակային ներդրումները, մատուցված ծառայությունների դիմաց վճարները, ՀՀ և օտարերկրյա կազմակերպությունների, քաղաքացիների նվիրատվությունները, նպատակային ֆինանսավորումները:.
- ՀՀ օրենսդրությամբ չարգելված և կազմակերպության կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:

7.ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

7.1. Կազմակերպությունը վերակազմակերպվում և լուծարվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

«ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ» ՀՈԱԿ-ի
ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ


Աշխատակիցների թվաքանակը- 14

Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

Հ/հ	Պաշտոնը	Դրույքաչափը	Դրույքը	Աշխատավարձ
1	Տնօրեն	160000	1	160000
2	Հաշվապահ	78000	1	78000
3	Ուժիտոր	78000	1	78000
4	Պահակ	72760	1	72760
5	Պահակ	72760	1	72760
6	Հավաքարար	72760	0.75	54570
7	Տնտեսավար	85000	1	85000
8	Շախմատի խմբակավար	78000	1	78000
9	Խմբակավար	120000	1	120000
10	Հավաքարար	72760	0.75	54570
11	Գրադարանավար	72760	1	72760
12	Գրադարանավար	72760	0.75	54570
13	Գրադարանավար	72760	0.75	54570
14	Գրադարանավար	72760	0.75	54570

Տնօրենի ժ/պ՝

Ա. Մնացականյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
 Vayk - 3801 Shahumyan 18
 Հեռ/տել 077112894
 Էլ. Փոստ vayktown@mail.ru

22 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2018թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 143

**<<ՎԱՅՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ>> ՀՈԱԿ-Ը ՄԻԱՑՄԱՆ ՁԵՎՈՎ
 ՎԵՐԱՎԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ <<ՎԱՅՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
 ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ>> ՀՈԱԿ-ԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին և 64-րդ հոդվածի 2-րդ մասերով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասով և 24-րդ հոդվածի 1-ին մասով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի <<Վայքի քաղաքային գրադարան>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմակերպման եղանակով միացնել ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքի <<Վայքի քաղաքային մշակույթի տուն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի <<Վայքի քաղաքային գրադարան>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության Ակտիվների և պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքները 01.10.2018թ. դրությամբ՝ համաձայն թիվ 1 հավելվածի:
3. Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի <<Վայքի քաղաքային մշակույթի տուն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության Ակտիվների և պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքները 01.10.2018թ. դրությամբ՝ համաձայն թիվ 2 հավելվածի:
4. Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի <<Վայքի քաղաքային գրադարան>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության և Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի <<Վայքի քաղաքային մշակույթի տուն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության միջև կնքված միացման պայմանագիրը՝ համաձայն թիվ 3 հավելվածի:

5. Հաստատել Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի «Վայքի քաղաքային գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության վերակազմակերպման կարգը ու պայմանները:
6. Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի «Վայքի քաղաքային գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության գույքի, ինչպես նաև պարտատերերի և պարտապաններին վերաբերող բոլոր/ներառյալ՝ վիճարկվող/ պարտավորությունների Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի «Վայքի քաղաքային մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը փոխանցման ակտը՝ համաձայն թիվ 4 հավելվածի:
7. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի «Վայքի քաղաքային մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարին/Աշոտ Մնացականյան/ հանձնարարել.
 - . մշակել կազմակերպության կանոնադրության փոփոխությունը և այն ներկայացնել համայնքի ղեկավարին,
 - . սույն որոշման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի «Վայքի քաղաքային մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխության ու այլ անհրաժեշտ փաստաթղթերի՝ «Վայոց Ձորի մարզի Վայք համայնքի ավագանու կողմից հաստատումից հետո, մեկամսյա ժամկետում դիմել «Հրավաբանական անձանց պետական ռեգիստր՝ պետական գրանցում կատարելու խնդրանքով.
 - . կատարել կազմակերպչական աշխատանքներ՝ սույն որոշմամբ հաստատված փոխանցման ակտի համաձայն հանձնում-ընդունում իրականացնելու, աշխատակիցների վերաձևակերպման, ինչպես նաև սույն որոշումից բխող այլ աշխատանքների ուղղությամբ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Թ. ԱՎԵՏՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Վայք համայնքի «Վայքի քաղաքային գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության

Ակտիվների և պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքները
 01.10.2018թ. դրությամբ (01.10.2018 թ. դրությամբ, մնացորդային արժեք, ՀՀ դրամ).

Հ/Հ	ՑՈՒՑԱՆԻՇԸ	ԱԿՏԻՎ	ՊԱՍԻՎ	ԾԱՆՈԹՈՒԹ.
1	Հիմնական միջոցներ	7496600		
2	Փոքրարժեք և արագամաշ առարկաներ	125500		
3	Լյուրեր և սննդամթերք			
4	Կարճաժամկետ պարտքեր			
5	Դրամական միջոցներ	69600		
